

ԾԱՆՈՒՑՈՒՄ՝ ՓԱՏՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԵՌԱՎԱՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

08.07.2016 20:20



Հարգելի փաստաբաններ,

Տեղեկացնում ենք, որ 2016թ. հունիսի 15-ից սկսվելու է փաստաբանների **հեռավար** (համացանցի միջոցով միաժամանակյա դիտման ռեժիմում) վերապատրաստման հարթակի գործարկումը:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 18.12.2014թ. 35/8-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված **Փաստաբանների վերապատրաստման կարգի** (այսուհետ՝ **Կարգ**) 11-րդ կետի համաձայն՝ *հեռավար ձևով վերապատրաստմանը կարող են մասնակցել միայն՝*

- Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի վարչական տարածքներում **հաշվառված և գործունենություն ծավալող փաստաբանները**.

- այլ պետությունում գտնվող փաստաբանները.
- տեղաշարժման սահմանափակումներով պայմանավորված առողջական խնդիրներ ունեցող փաստաբանները՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշման հիման վրա.

- այն փաստաբանները, որոնց թույլատրված է մասնակցել կոնկրետ թեմայով վերապատրաստմանը և հայտարարության մեջ նախապես տեղեկացված են տվյալ վերապատրաստման դասընթացը *հեռավար ձևով անցնելու մասին:*

Վերոգրյալը հաշվի առնելով, հեռավար վերապատրաստման դասընթացներին կարող են մասնակցել միայն այն փաստաբանները, ովքեր ՀՀ փաստաբանների պալատ դիմում կներկայացնեն հեռավար դասընթացներին մասնակցելու վերաբերյալ՝ կցելով Կարգի 11-րդ կետում սահմանված կարգավիճակը հավաստող փաստաթուղթ:

Դիմումները կարող եք ներկայացնել նաև էլեկտրոնային փոստի միջոցով՝ Ձեր կողմից ստորագրված դիմումի սկան արված տարբերակն ուղարկելով **ani.gharibyan@advocates.am** էլ. հասցեին:

Մյուս անհրաժեշտ նյութերին (այդ թվում՝ պարզաբանման տեսագրությանը) կարող եք ծանոթանալ www.advocates.am կայքի «Վերապատրաստում» հավելվածում:

Բեռնել հեռավար վերապատրաստումներին մասնակցելու մասին դիմումի ձևը.

Բեռնել «Հեռավար ձևով վերապատրաստման իրականացման» կարգը.

Բեռնել հեռավար ձևով վերապատրաստման վերաբերյալ Ծանուցումը (նկարագրությունը).

Հարգանքով՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ

Առաջարկվող նորություններ



02.11.2015 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԿԱՐԳՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

06.10.2020 ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ
ԱՆԴԱՄԱՎԾԱՐ ՎԾԱՐԵԼՈՒ
ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ
ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```